

**ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԵՎ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Ֆինանսատնտեսական ճգնաժամների պայմաններում, երբ առաջ են գալիս այնպիսի խնդիրներ ինչպիսիք են արտադրության ծավալների անկումը, զբաղվածության ծավալների կրճատումը, բնակչության սոցիալական մակարդակի վատթարացումը, գնաճային գործընթացների խորացումը և այլն, հարկային քաղաքականությունը ձեռք է բերում առանձնահատուկ դերակատարություն: Համաձայն Է. Հանսենի, ով հանդիսանում է «Հարկային քաղաքականությունը և տնտեսական ցիկլերը» աշխատության հեղինակը, համանման իրավիճակներում, նա ի թիվս այլ գործիքների, որպես ճգնաժամների հաղթահարման կարևոր լծակ է դիտարկում նաև եկամտահարկը: Ըստ հեղինակի՝ ճգնաժամային իրավիճակներում հարկ է կրճատել եկամտահարկերի մեծությունը բարձրացնելու համար հասարակական եկամուտների արդյունքում նաև՝ արդյունավետ պահանջարկի մակարդակը և ընդհակառակը տնտեսության զարգացման հասուն մակարդակներում բարձրացնել այն՝ խուսափելու համար գնաճային և գերարտադրության ռիսկերից¹: Սակայն, հարկային քաղաքականությունն համանման իրավիճակներում ոչ միայն եկամտահարկի, այլև ըստ էության շահութահարկի գծով պետք է ունենա այնպիսի ուղղվածություն, որը համաժամանակյա համահարթեցնող ազդեցություն կկրի՝ անկախ այն բանից, թե տնտեսությունը զարգացման ինչպիսի փուլում է գտնվում: Այս տեսակետից եկամտահարկը, որը գանձվում է ֆիզիկական անձանց եկամուտներից և զգալի ազդեցություն ունի վերջիններիս եկամուտների մակարդակի ձևավորման, հետևապես նաև բնակչության կենսամակարդակի վրա, իրապես բավականաչափ կարևոր լծակ է: Եկամտահարկի դրույքաչափերի և հարկման օբյեկտի ճիշտ ընտրությունը կարող է ձեռք բերել զգալի ազդեցություն ինչպես աշխատավարձի ձևով ստացվող եկամուտների համեմատաբար ավելի հավասարաչափ վերաբախման, այնպես և կենսամակարդակի բարձրացման, համախառն կամ արդյունավետ պահանջարկի ավելի համաչափ աճի ապահովման տեսանկյունից: Այս խնդիրն արդիական է նաև ՀՀ պարագայում, որտեղ բնակչության եկամուտների բևեռացման աստիճանը բավականաչափ խորն է:

Մասնավորապես, ըստ 20%-անոց քվանտիլային խմբերի եկամուտների² 2004-2008թթ. ընթացքում բնակչության դրամական եկամուտների բաշխման անհամաչափության աստիճանը ըստ Լորենցի կորի ներկայացված է գծապատկեր 1-ում:


Ձիմի գործակցի տեղաշարժը համապատասխանաբար 2004-2008թթ. համար 2004թ. 0.395-ի համեմատ 2008թ. կազմել է 0.389³ (տե՛ս գծապատկեր 2-ը):

¹ Տե՛ս Харрод Р. “К теории экономической динамики” Глава 2.
http://adhdportal.com/book_897_chapter_3_%C2%A7_2._NEOKEJNSJANSKAJA_TEORIJA_%D0%A1IKLA._EH.KHANSE N.html:


² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, Կենսամակարդակ, կետ 62, էջ 91:

³ Տե՛ս նույն տեղում:

Լորենցի կորը ՀՀ-ում 2004-2008թթ.



Ջինի գործակիցը ՀՀ-ում 2004-2008թթ.



Սա վկայում է այն մասին, որ բնակչության դրամական եկամուտների բեռացման աստիճանը Հայաստանում հանդես է բերում խորացման դինամիկա: Ուստի, դրա կասեցման իմաստով բավականաչափ կարևոր դերակատարում կարող է ունենալ եկամտահարկը և գործող եկամտահարկի մասին օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը: Մասնավորապես, արդյունավետ կլինի վերափոխել եկամտահարկի հարկման սուբյեկտին՝ որպես այդպիսին ընդունելով ոչ թե անհատին, այլ՝ ընտանեկան միավորը: Այս դեպքում, եկամուտների բախշման մակարդակը կարող է շոշափելիորեն համահարթեցվել: Սկզբունքի տրամաբանությունը կայանում է հետևյալում. հաշվի են առնվում ընտանեկան միավորի համախառն եկամուտի մեծությունը և ապա հարկային նվազեցումների մեջ ներառվում են համապատասխան չափորոշիչներ կապված տվյալ ընտանիքում անչափահաս երեխաների թվաքանակի, տվյալ ընտանիքի խնամակալության տակ գտնվող մեծահասակ

ընտանիքի անդամների, դրանց բոլորի հաշվով կենսամիջոցների նվազագույն եկամուտների մակարդակի, հիփոթեքային վարկի տոկոսագումարների և այլնի հետ, ինչը հնարավորություն կընձեռի կտրուկ բարձրացնել եկամտահարկի կարգավորիչ դերը՝ այն դարձնելով առավել ճկուն սոցիալական պաշտպանվածության բարձրացման, եկամուտների առավել հավասարաչափ վերաբաշխման տեսանկյունից: Նման փոփոխությանը զուգահեռ՝ նպատակահարմար կլինի նաև պրոգրեսիվ հարկման երկաստիճան համակարգից անցում կատարել առավել բազմաստիճան համակարգի՝ կապված եկամտահարկի գծով ներկայումս գործող հարկման օրենսդրության բովանդակային հետևյալ հակասության հետ: Մասնավորապես, ինչպես հայտնի է, 2010 թվականին որպես նվազագույն աշխատավարձի մեծություն կամ եկամտի չհարկվող շեմ ընդունվել է 30 000 ՀՀ դրամը, որը մեր դեպքի (և առհասարակ միջազգային պրակտիկայում այս շեմը նախատեսվում է ոչ միայն որպես մեխանիզմ եկամտահարկի չափի կարգավորման համար, այլ նաև այն նույնացվում և համադրվում է 1 շնչի հաշվով կենսամիջոցների նվազագույն մեծությանը, որը գտնվում է հարկային արտոնյալ դաշտում) համար կարող է համեմատելի դառնալ 1 անձի հաշվով կենսամիջոցների նվազագույն արժեքի մեծության հետ: Ըստ այս տրամաբանության, եթե 4 շնչից բաղկացած ընտանիքում աշխատում է 1 անձ, ում եկամուտը չի գերազանցում 120 000 դրամը, ապա համախառն եկամտի մակարդակն այդ ընտանիքի համար պետք է ազատվի հարկումից, որպեսզի ապահովվի ընտանիքի անդամների հաշվով սպառողական նվազագույն զամբյուղի մեծությունը: Սակայն, ըստ գործող օրենքի, համանման դեպքերում այս տրամաբանությունը, փաստորեն, չի գործում: Ուստի, հնարավոր տարբերակների թվում, հարկման պրոգրեսիայի աստիճանակարգը, ինչպես նաև հարկադրույքները պետք է դիտարկվեն նախնական չհարկվող շեմի հիմքում դնելով ինչպես առանձին ֆիզիկական անձի սպառողական նվազագույն զամբյուղի մեծությունը, այնպես և այդ մեծությունը տվյալ ընտանիքի բոլոր անդամների թվաքանակի չափով, հակառակ պարագայում սոցիալական եկամուտների բախշման տեսակետից ծայրահեղ անապահով ընտանիքների ձևավորման փաստից խուսափելը, ներկա տնտեսական պայմաններում կդառնա գրեթե անհնար:

Պրոգրեսիվ հարկման աստիճանակարգի տարբերակներից մեկը, կարող է օրինակ հանդես գալ հետևյալ ձևով (տե՛ս աղյուսակ 1-ը)՝

Աղյուսակ 1

Եկամտահարկի պրոգրեսիվ հարկման աստիճանակարգ

Ընտանեկան համախմբված բյուջեի նկատմամբ	Կիրառվող հարկադրույքը
Մինչև (ընտանքի շնչերի թիվ x նվազագույն սպառողական զամբյուղի արժեք) շեմը	0%
Չհարկվող, հաշվարկվող շեմը գերազանցող գումարից մինչև 100 000 դրամը	5%
100 000 դրամից մինչև 200 000 դրամը	10%
200 000 դրամից մինչև 300 000 դրամը	15%
300 000 դրամից մինչև 400 000 դրամը	20%
400 000 դրամից ավելի եկամտի դեպքում	30%

Հարկային դրույքաչափերի ընտրությունը տվյալ դեպքում պետք է կախված դառնա ինչպես եկամուտների համահարթեցման, այնպես և տվյալ հարկի գծով հարկային ընդհանուր եկամուտների մեջ հարկային մուտքերը հնարավորինս հաստատուն պահպանելու

անհրաժեշտությունից կամ, այլ կերպ ասած, այնպիսի հարկադրույքներից, որոնք, ի հաշիվ առավել բարձր եկամուտ ունեցող ընտանիքներից հավելյալ հարկային մուտքերի ապահովման, կփոխհատուցեն առավել քիչ եկամուտ ունեցող ընտանիքների եկամտահարկի գծով հարկային մուտքերի կրճատման տարբերությունը:

Եկամտահարկի գծով համանման փոփոխությունը միաժամանակ կարող է հանգեցնել հավաքագրման և դրա հաշվարկման ավելի բարդ մեխանիզմների կիրառմանը, որտեղ անհրաժեշտություն կառաջանա որոշակի ժամկետային պարբերականությամբ վերանայել առանձին ֆիզիկական անձանց, ինչպես նաև նրանց համախառն ընտանեկան եկամուտների մակարդակները՝ ներմուծելով հավաքագրման նոր մեխանիզմներ՝ կապված մասնավորապես այն հանգամանքի հետ, որ գործող եկամտահարկի մասին օրենքով որպես հարկատու անձի հարկային գործակալ հանդես է գալիս գործատու կազմակերպությունը: Եկամտահարկի վճարումն այս դեպքում իրականացնում է կազմակերպությունը: Սակայն ընտանեկան եկամտահարկի հաշվարկման և վճարման պարագայում, հավաքագրման այս մեխանիզմն այլևս նույնությամբ չի կարող գործել (բացառությամբ թերևս միայն այն դեպքի, եթե միևնույն ընտանիքի աշխատող անդամներն աշխատեն միևնույն կազմակերպությունում):

Արդյունքում խնդիր կառաջանա մտցնել ընտանեկան եկամուտների ժամկետային պարտադիր հայտարարագրման գործընթաց հարկային համապատասխան մարմիններում և վերանայել հարկային գործակալ հանդես եկող անձանց կազմը:

Ինչ վերաբերում է շահութահարկին, ապա այն հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի¹ շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, որտեղ հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական արժեքով: Ըստ այդմ որպես շահութահարկ վճարողներ են հանդես գալիս ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և ՀՀ կենտրոնական բանկի:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից կատարվում են համապատասխան նվազեցումներ (ծախսերը, կորուստները), որտեղ, ինչպես նշվում է գործող օրենքում, որպես ծախս է համարվում դիտարկվող տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների այն աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը: Այդ թվում՝

- նյութական ծախսերը,
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովության վճարները,
- ամորտիզացիոն մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատուցվող հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները,
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները,

¹ Շահութահարկի մասին ՀՀ օրենք, ընունված 30 սեպտեմբեր, 1997թ., Բաժին 1, գլուխ 1, հոդված 2.3, ԻՐՏԵԿ:

- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային, ապահովագրական ու վարկային կազմակերպությունների ծառայությունների համար վճարները,
- գովազդային ծախսերը և այլն:

Ըստ այդմ՝ մի շարք ծախսատեսակներ, որոնց գծով պետությունը սահմանել է համապատասխան նորմատիվային չափաքանակներ, դուրս են մնում նվազեցումների հանրագումարից այն չափով, ինչ չափով տվյալ կազմակերպությունը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձը գերազանցում է սահմանված նորմատիվային չափը (օրինակ՝ վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար կառավարության սահմանած չափը գերազանցող վճարները, հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը, սահմանած չափը գերազանցող ներկայացուցչական և հովանավորչական ծախսերը և այլն):

Շահութահարկի հարկման դրույքաչափը կազմում է 20%, որից ազատման գծով արտոնություն է տրված՝ գյուղատնտեսական արտադրանքին (հարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը), ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին, «Համահայկական բանկին» և այլն:

Այսուհանդերձ, ներկայումս գործող օրենքով արտոնություններն հիմնականում տրված են գյուղատնտեսական ապրանքների արտադրությանը և արտահանման գործընթացին նպաստող ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը, ինչը բավականաչափ խրախուսելի է հաշվի առնելով գյուղատնտեսության զարգացման ներկա վիճակը և տեղական ապրանքատեսակներն արտաքին շուկայում գնալին առումով ավելի մրցունակ դարձնելու խնդիրը: Սակայն շահութահարկի դեպքում գործում է հարկման դրույքաչափի մեկ սանդղակ, որն ընդհանուր է բոլոր հարկատուների համար, այն դեպքում, երբ ՀՀ տնտեսության զարգացման ներկա աստիճանում առավել նպատակահարմար կլիներ կիրառել պրոգրեսիվ հարկման դրույքաչափերի որոշակի աստիճանակարգ, որտեղ հատկապես շեշտադրված կլինի հակամենաշնորհային հարկման տրամաբանությունը:

Օրինակ, հարկման համանման դրույքաչափերի կիրառումը նպատակահարմար կլինի անանցել, հիմք ընդունելով դեռևս չհարկված շահույթի տոկոսային աստիճանի մեծությունը համախառն եկամուտների նկատմամբ, որտեղ տրամաբանությունը պետք է հանգեցվի հետևյալին. որքան բարձր է տվյալ հարկատուի կողմից թողարկված արտադրանքի կամ մատուցած ծառայության գծով հարկման ենթակա շահույթի տոկոսային մակարդակը, այնքան ավելի բարձր պետք է լինի հարկման դրույքաչափը: Ընդ որում պրոգրեսիայի ընտրությունը հիմնված պետք է լինի այնպիսի հարկային դրույքաչափերի կիրառման վրա, որոնք զուտ շահույթի որոշակի նպատակային, նորմալ մեծության շուրջ հնարավորինս կհավասարակշռեն տնտեսության տարբեր ոլորտների մասով հարկված շահույթի տոկոսային մակարդակները: Եթե, օրինակ, հիմք ընդունենք, որ մման տոկոսադրույթի միջակայքը կարող է ընդգրկել 10%-20%-ը, ապա գերշահույթ ստացող կազմակերպությունները նման դեպքում ստիպված կլինեն վճարել այնպիսի շահութահարկ, որը շահույթի այդ գերմակարդակը կնվազեցնի՝ այն մոտեցնելով նշված միջակայքին:

Դա կունենա հետևյալ առավելությունները՝

1. Կունենա հակամենաշնորհային ուղղվածություն:
2. Տնտեսության մեջ տեղի կունենա նյութական արտադրության և ծառայությունների մատուցման տարբեր ոլորտների համընթաց զարգացում: Մասնավորապես տնտեսության մեջ իրավիճակային փոփոխությունների հետևանքով, երբ որոշակի ոլորտը կարող է դառնալ առավել շահութաբեր և հետևաբար՝ ներդրումային տեսակետից առավել գրավիչ, տեղի չի ունենա նյութական արտադրության մեկ այլ ոլորտից կապիտալի էական արտահոսք մեկ այլ ոլորտ:
3. Այլ հավասար պայմաններում պահանջարկի գնաճի հանդես գալու տեսակետից այն կկրի հակազդող բնույթ, երբ համախառն ծախսերի անփոփոխ մակարդակի և արդյունավետ պահանջարկի աճի դեպքում տնտեսական սուբյեկտների մոտ էականորեն կնվազի ապրանքների գների մակարդակի բարձրացման հաշվին շահույթը մաքսիմալացնելու շարժառիթը: Ընդհակառակը ավելի գերիշխող կդառնա շրջանառության ծավալները ընդարձակելու հաշվին շահույթը մաքսիմալացնելու ձգտումը, ինչը որպես հետևանք կհանգեցնի վերջիններիս կողմից ավելի գրագետ մարկետինգային քաղաքականության, ապրանքատեսակների և ծառայությունների դիվերսիֆիկացիայի մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներին, մրցակցության խորացմանը և այլն՝ արդյունքում հանգեցնելով նաև գնաճի զսպմանը:

Մյուս կողմից, քանի որ տնտեսության մի շարք ոլորտներում կարող են գործել շուկայում մենաշնորհային դիրք ունեցող տնտեսական սուբյեկտներ, որոնք կարող են ունենալ միավոր արտադրանքի հաշվով հարկվող շահույթի համեմատաբար ցածր մակարդակ, նպատակահարմար է պրոգրեսիվ հարկման սանդղակաչափը կառուցել որոշակի տրամաբանությամբ, մասնավորապես՝ չհարկված շահույթի տոկոսի տվյալ մակարդակից ցածրի դեպքում սահմանել հարկման դրույքաչափի հաստատուն մեծություն, իսկ շահույթի տոկոսային տվյալ աստիճանից ավելի բարձրի դեպքում կիրառել միևնույն հարկային դրույքաչափը, ինչ չհարկված շահույթի տոկոսային տվյալ աստիճանն է համախառն եկամուտների նկատմամբ:

ՀՀ տնտեսության պայմաններում նման մոտեցումը կարող է արդյունավետ դառնալ հիմք ընդունելով, որ տնտեսության տարբեր ոլորտներում առկա են շահութաբերության բևեռացման տարբեր աստիճաններ: Մասնավորապես, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007-2008թթ. ընթացքում ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում գործող և տարբեր տնտեսական գործունեությամբ զբաղվող 1316 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների հաշվետվային տվյալների հիման վրա¹ հաշվարկված արտադրանքի շահութաբերության աստիճանների վերաբերյալ ցուցանիշներից կարելի է նկատել, որ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսական սուբյեկտների շահույթի միջին մակարդակը 2007-2008թթ. կազմել է 15.4-11.3%, այն դեպքում, երբ այն առավել բարձր է եղել հյուրանոցային և ռեստորանային, տրանսպորտի և կապի ծառայությունների, անշարժ գույքի հետ կապված գործունեության, վարձակալության ծառայությունների մատուցման ոլորտներում (տե՛ս աղյուսակ 2-ը):

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տեղեկագիր «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-հունիսին», Երևան, 2009թ., կետ 1.2.8, էջ 56, www.armstat.am/file/article/sv_06_09a_1281.pdf:

**Արտադրանքի շահութաբերության աստիճանը ՀՀ-ում
ըստ տնտեսության ոլորտների 2007-2008թթ.**

N	Անվանումը	Արտադրանքի շահութաբերու- թյուն,%		Շահույթը նախքան շա- հութահարկի գծով ծախսի նվազեցումը, մլն դրամ	Շահութահարկի մեծու- թյունը, ըստ հարկման 20% դրույթաչափի, մլն դրամ	Շահութահարկի հնարավոր մեծությունը, ըստ հարկման պրոցենտի դրույթաչափերի, մլն դրամ
		2007թ.	2008թ.	2008թ.	2008թ.	2008թ. դեպքում
ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝		15.4	11.3	176222.5	35244.5	37172.3
1	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	15.3	15.2	941.6	188.32	143.1
2	Հանքագործական արդյունաբե- րություն	80.2	10.0	10158.8	2031.76	1523.8
3	Վերամշակող արդյունաբերություն	11.9	7.8	39697.3	7939.46	5954.6
4	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	1.2	1.4	12221.1	2444.22	1833.2
5	Շինարարություն	8.4	8.3	9942.8	1988.56	1491.4
6	Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	9.4	9.9	30165.3	6033.06	4524.8
7	Տրանսպորտ և կապ	34.4	32.9	56983.6	11396.72	18747.6
8	Ֆինանսական գործունեություն	73.0	11.7	73.4	14.68	11.0
9	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն, վարձակալություն և սպառողներին ծառայությունների մատուցում	35.4	28.5	6819.0	1363.8	1943.4
10	Պետական կառավարում	0.5	2.8	2.2	0.44	0.2
11	Կրթություն	16.8	23.5	715.1	143.02	168.0

Առավել փոքր շահութաբերությամբ առանձնացել են էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտները, ինչպես նաև պետական կառավարման ենթակա-
յության տակ գտնվող ձեռնարկությունների գործունեության ոլորտները: Այլ ոլորտներում
շահութաբերությունը տատանվել է 8-15% սահմաններում: Ըստ աղյուսակում ներկայացված
տվյալների՝ տնտեսական ոլորտների 2008թ. շահույթի նկատմամբ շահութահարկի հաշվար-
կը մեր կողմից մի դեպքում իրականացվել է ըստ գործող հարկման դրույթաչափի՝ 20%, իսկ
մյուս դեպքում՝ ըստ պրոցենտի հարկման դրույթաչափերի, որտեղ դրանք ընդունվել են
հետևյալ սկզբունքով՝

1. Մինչև 15% չհարկված շահույթի համար հարկման 15% դրույթաչափ:

2. 15%-ից բարձր չհարկված շահույթի նկատմամբ չհարկված շահույթի տոկոսային աստիճանին հավասար դրույքաչափ:

Ինչպես կարելի է տեսնել ստացված արդյունքներից, շահութահարկի գծով հարկման քեռն ավելի հավասարաչափ է այս դեպքում վերաբախշվում և միաժամանակ հարկային մուտքերի աստիճանը 5.5%-ով բարձրանում է:

Հարկման պրոգրեսիվ դրույքաչափերի ընտրությունը կարող է իրականացվել նաև այլ մեծություններով, սակայն հստակ է, որ հարկման մման մոտեցումն առավել արդյունավետ կլինի, հիմք ընդունելով ՀՀ տնտեսության զարգացման ներկա մակարդակը, այստեղ տեղ գտած խնդիրները, երբ անհրաժեշտ է միաժամանակ իրականացնել տնտեսական զարգացման, մրցակցային դաշտի ձևավորման, հակամենաշնորհային և գնաճի զսպմանն ուղղված, խթանող տնտեսական քաղաքականություն:

Հարկման պրոգրեսիվ դրույքաչափերի կիրառումը բավականաչափ կարգավորիչ ազդեցություն կարող է ունենալ ինչպես ճգնաժամային, այնպես էլ ոչ ճգնաժամային իրավիճակներում, երբ որպես ճգնաժամային իրավիճակներում հանդես եկող երևույթ առկա է դառնում ձեռնարկությունների շահութաբերության անկման գործընթացը և ֆինանսական ռեսուրսների պակասությունը, իսկ ոչ ճգնաժամային իրավիճակներում՝ գերարտադրության արդյունքում հանդես եկող ռիսկերը: Այս դեպքում պրոգրեսիայի ընտրությունը հնարավորություն է ընձեռում ֆինանսապես ավելի դժվար կացության մեջ գտնվող ձեռնարկություններին դառնալ շարունակաբար առավել կենսունակ և ընդհակառակը՝ համահարթեցնել մենաշնորհային կամ խմբաշնորհային դիրքի շնորհիվ գերշահույթ հետապնդող կազմակերպությունների շահույթի մակարդակը՝ այն համապատասխանեցնելով շահույթի առավել «Խելամիտ» մակարդակի հետ: Նման հարկադրույքների կիրառումն այդպիսով կողմնակիորեն նպաստում է նաև ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում տարբեր ձեռնարկություններին սնանկացումից փրկելու համար պետական ուղղակի ֆինանսական աջակցության ծավալների նվազմանը, քանի որ այս մեթոդաբանությունն արդեն իսկ պարունակում է իր մեջ ֆինանսական կայունության պահպանման համահարթեցնող տարրը: